ԱՈՒԴԻՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ 810

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարագրաֆ

Ներածություն

Սույն ԱՄՍ-ի շրջանակները..... 1

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը..... 2

Նպատակները 3

Սահմանումներ..... 4

Պահանջները

Առաջադրանքի ստանձնում. 5-7

Ընթացակարգերի բնույթը..... 8

Եզրակացության ձևը..... 9-11

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվին հաջորդող աշխատանքների և դեպքերի ժամկետը..... 12-13

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն..... 14-19

Բաշխման կամ օգտագործման սահմանափակում, կամ ծանուցում ընթերցող-ներին հաշվապահական հաշվառման հիմունքի մասին..... 20

Համեմատություններ..... 21-22

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ ներկայացված աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվություն..... 23

Այլ տեղեկատվություն ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթերում..... 24

Աուդիտորի կապակցում..... 25-26

Կիրառումը և այլ բացատրական նյութեր

Առաջադրանքի ստանձնում..... Ա1-Ա7

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների հասանելիության գնահատում..... Ա8
Եզրակացության ձևը..... Ա9
Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվին հաջորդող աշխատանքների և դեպքերի ժամկետը..... Ա10
Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն..... Ա11-Ա15
Համեմատություններ..... Ա16-Ա17
Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ ներկայացված աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվություն..... Ա18
Այլ տեղեկատվություն ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթերում..... Ա19
Աուդիտորի կապակցում..... Ա20
Հավելված Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունների ցուցադրական օրինակներ

<<Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ>> աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ը պետք է դիտարկել <<Անկախ աուդիտորի ընդհանուր նպատակները և աուդիտի իրականացումը՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների>> ԱՄՍ 200-ի հետ համատեղ:

Ներածություն

Սույն ԱՄՍ-ի շրջանակները

1. Սույն աուդիտի միջազգային ստանդարտը (ԱՄՍ) անդրադառնում է ԱՄՍ-ների համաձայն աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ նույն աուդիտորի կողմից ներկայացվող աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքին վերաբերող աուդիտորի պատասխանատվությանը:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

2. Սույն ԱՄՍ-ն կիրառելի է 2009թ. դեկտեմբերի 15-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար:

Նպատակը

3. Աուդիտորի նպատակներն են՝

(ա) որոշել՝ արդյոք տեղին է ստանձնել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու առաջադրանքը, և

(բ) ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության հետ կապված առաջադրանքը ստանձնելու դեպքում՝

(i) ձևավորել կարծիք ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով ձեռքբերված ապացույցի հիման վրա եզրակացությունների գնահատականը, և

(ii) հստակորեն արտահայտել այդ կարծիքը գրավոր եզրակացության միջոցով, որտեղ նկարագրվում է նաև նշված եզրակացության համար ծառայած հիմքերը:

Սահմանումներ

4. ԱՄՍ-ների նպատակներով, ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ իմաստները՝

(ա) կիրառված չափանիշներ՝ չափանիշներ, որոնք կիրառվում են ղեկավարության կողմից՝ ամփոփ ֆինանսական հաշվետվություններ կազմելիս,

(բ) աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններ՝ աուդիտորի կողմից ԱՄՍ-ների համաձայն ստուգված ֆինանսական հաշվետվությունները[1], որոնց հիման վրա կազմվում են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները,

(գ) ամփոփ ֆինանսական հաշվետվություններ՝ ֆինանսական հաշվետվություններից ստացված սկզբնական ֆինանսական տեղեկատվությունը, որը պարունակում է ավելի քիչ մանրամասներ քան ֆինանսական հաշվետվությունները՝ միաժամանակ տրամադրելով կազմակերպության տնտեսական միջոցների կամ պարտականու-թյունների համակարգված ներկայացումը տվյալ պահի համար, կամ դրանցում կատարված փոփոխությունները տվյալ ժամանակա - հատվածի համար[2], որը համապատասխանում է ֆինանսական հաշվետվությունների տրամադրած տեղեկություններին: Տարբեր իրավահամակարգերում սկզբնական ֆինանսական տեղեկատվությունը նկարագրելու համար կարող են օգտագործվել տարբեր տերմիններ:

Պահանջները

Առաջադրանքի ստանձնում

---

[1] ԱՄՍ 200 <<Անկախ աուդիտորի համընդհանուր նպատակները և աուդիտի իրականացումը՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների>>, ստանդարտ, պարագրաֆ 13 (գ) կետը սահմանում է <<ֆինանսական հաշվետվություններ>> տերմինը:

[2] ԱՄՍ 210 ստանդարտ, պարագրաֆ 13(գ):

5. Աուդիտորը պետք է ստանձնի սույն ստանդարտի համաձայն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու առաջադրանքը միայն, եթե աուդիտորը ներգրավված է եղել ԱՄՍ-ների համաձայն այն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի գործընթացում, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները (հղում՝ պար. Ա1):

6. Նախքան ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու առաջադրանքի ստանձնումը, աուդիտորը պետք է (հղում՝ պար. Ա2).
   (ա) որոշի՝ արդյոք կիրառված չափանիշներն ընդունելի են, թե ոչ (հղում՝ պար. Ա63-Ա7),
   (բ) ձեռք բերի ղեկավարության համաձայնությունն առ այն, որ վերջինս ընդունում և հասկանում է իր պատասխանատվությունը ստորև նշվածների նկատմամբ՝
      (i) ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստում կիրառված չափանիշների համաձայն,
      (ii) աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների հասանելիություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին՝ առանց անհարկի դժվարության (կամ, եթե օրենքով կամ կարգավորող նորմերով նախատեսվում է, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները չպետք է հասանելի լինեն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին և սահմանվում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման չափանիշները, ապա ամփոփ ֆինանսակայն հաշվետվություններում օրենքի կամ կարգավորող նորմի նկարագրում), և
      (iii) ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներառում ցանկացած այն փաստաթղթում, որը պարունակում է ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և նշում, որ աուդիտորը ներկայացրել է եզրակացություն դրանց վերաբերյալ,
   (գ) ղեկավարության հետ համաձայնեցնի ամփոփ ֆինանսական հաշվտեվությունների վերաբերյալ ներկայացվող եզրակացության ձևը (տես՝ պարագրաֆ 9-11):

7. Եթե աուդիտորի որոշմամբ կիրառված չափանիշներն անընդունելի են կամ, որ ինքն ի վիճակի չէ ստանալ պարագրաֆ 6(բ) կետում սահմանված ղեկավարության համաձայնեցումը, ապա աուդիտորը չպետք է ստանձնի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու առաջադրանքը, եթե դա չի պահանջվում օրենքով կամ կարգավորող նորմերով: Օրենքի կամ կարգավորող նորմերի համաձայն իրականացված առաջադրանքը չի համապատասխանում սույն ստանդարտին: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը չպետք է հատկորոշի, որ առաջադրանքն իրականացվել է սույն ԱՄՍ-ի համաձայն: <<Առաջադրանքի պայմաններ>> բաժնում աուդիտորը նշված փաստի վերաբերյալ պետք է ներկայացնի համապատասխան բացատրություն: Աուդիտորը պետք է նաև որոշի այն, թե ինչպիսի ազդեցություն կունենա նշված փաստն այն ֆինանսական հաշվետվությունների

աուդիտի առաջադրանքի վրա, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները:

Ընթացակարգերի բնույթը

8. Աուդիտորը պետք է իրականացնի ստորև նշված ընթացակարգերը և ցանկացած այլ ընթացակարգ, որոնք, ըստ աուդիտորի, անհրաժեշտ են ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությանը հիմք ծառայեցնելու համար՝
   (ա) գնահատել՝ արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատշաճ ձևով բացահայտում են իրենց ամփոփ լինելու բնույթը և հատկորոշում/սահմանում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները,
   (բ) այն դեպքում, երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ուղեկցվում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններով, գնահատել՝ արդյոք դրանք հստակորեն նկարագրում են՝
      (i) ումից և որտեղից կարելի է ձեռք բերել աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, կամ

      (ii) օրենսդրությունը կամ կարգավորող նորմերը, համաձայն որոնց աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները չպետք է հասանելի լինեն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին և համաձայն որոնց սահմանվում են ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման չափանիշները,

   (գ) գնահատել՝ արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատշաճ ձևով բացահայտում են կիրառված չափանիշները,
   (դ) համեմատել ամփոփ ֆինանսական հաշվետվությունները աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններում ներկայացված առնչվող տեղեկատվության հետ՝ որոշելու՝ արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններում ներկայացված առնչվող տեղեկատվությանը կամ կարող են ենթադրվել այդ տեղեկատվությունից,
   (ե) գնահատել՝ արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են կիրառված չափանիշների համաձայն,
   (զ) ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նպատակի շրջանակներում, գնահատել՝ արդյոք դրանք պարունակում են անհրաժեշտ տեղեկատվություն և պաշաճ ձևով կիրառում են համակցության սկզբունքը՝ կոնկրետ պայմաններում ապակողմնորոշիչ տեղեկատվություն չներկայացնելու համար,
   (է) գնահատել՝ արդյոք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններն հասանելի են ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին՝ առանց անհարկի դժվարության, եթե օրենքով կամ կարգավորող նորմերով չի նախատեսվում, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները չպետք է հասանելի լինեն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին և սահմանվում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման չափանիշները (հղում՝ պար. Ա8):

Եզրակացության ձևը

9. Երբ աուդիտորը որոշում է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ չձևափոխված եզրակացություն արտահայտելը տեղին է, ապա աուդիտորի եզրակացությունը պետք է, եթե այլ բան չի պահանջվում օրենսդրությամբ կամ կարգավորող նորմերով, կիրառի ստորև նշված արտահայտություններից որևէ մեկը (հղում՝ պար. Ա9).
   (ա) ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին՝ [կիրառված չափանիշների] համաձայն, կամ
   (բ) ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հանդիսանում են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ամփոփ ներկայացումը՝ [կիրառված չափանիշների] համաձայն:

10. Եթե օրենսդրությամբ կամ կարգավորող նորմերով սահմանվում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության բառային արտահայտությունները, որոնք տարբերվում են պարագրաֆ 9-ում նկարագրված արտահայտություններից, ապա աուդիտորը պետք է՝
   (ա) կիրառի պարագրաֆ 8-ում նկարագրված ընթացակարգերը և ցանկացած այլ ընթացակարգ, որն անհրաժեշտ է աուդիտորին հնարավորություն ընձեռելու սահմանված եզրակացությունն արտահայտելու համար, և
   (բ) գնահատի՝ հնարավոր է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը ճիշտ չընկալվի դրանց օգտագործողների կողմից, եթե այո, արդյոք անհրաժեշտ է աուդիտորական եզրակացությունում ներառել լրացուցիչ բացատրություն հնարավոր ճիշտ չընկալումը մեղմացնելու նպատակով:

11. Եթե պարագրաֆ 10(բ) կետի դեպքում, աուդիտորը որոշում է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունում լրացուցիչ բացատրության ներառումը չի կարող մեղմացնել հնարավոր ճիչտ չընկալումը, ապա աուդիտորը չպետք է ստանձնի առաջադրանքը, եթե օրենսդրությամբ կամ կարգավորող նորմերով չի պահանջվում նման կերպ վարվել: Օրենսդրության կամ կարգավորող նորմերի համաձայն իրականացրած առաջադրանքը չի համապատասխանում սույն ստանդարտին: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը չպետք է սահմանի, որ առաջադրանքն իրականացվել է սույն ստանդարտին համապատասխան:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվին հաջորդող աշխատանքների և դեպքերի ժամկետը

12. Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության (հրապարակման) ամսաթիվը կարող է լինել ավելի ուշ քան աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության (հրապարակման) ամսաթիվը: Նման դեպքերում, ամփոփ ֆինանսական

հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պետք է սահմանի, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվին հաջորդող տեղի ունեցած դեպքերի ազդեցությունները, որոնք կարող են պահանջել աուդիտորկան ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ճշգրտում կամ բացահայտում այդ հաշվետվություններում (հղում՝ պար. Ա10):

13. Աուդիտորը կարող է իրազեկ դառնալ գոյություն ունեցող փաստերի մասին աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվի դրությամբ, որոնց մասին աուդիտորը նախկինում տեղյակ չէր: Նման դեպքերում, աուդիտորը չպետք է հրապարակի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, մինչև աուդիտորի կողմից աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ նշված փաստերի դիտարկումը ԱՄՍ 560-ի[3] համաձայն չի ավարտվել:

Աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Աուդիտորական եզրակացության տարրերը

14. Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պետք է ներառի ստորև նշված տարրերը՝[4] (հղում՝ պար. Ա15).
    (ա) անվանումը, որտեղ հստակորեն նշվում է, որ եզրակացությունը ներկայացվում է անկախ աուդիտորի կողմից (հղում՝ պար. Ա11),
    (բ) հասցեատերը (հղում՝ պար. Ա12),
    (գ) ներածական պարագրաֆ, որը՝
        (i) սահմանում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնց վերաբերյալ աուդիտորի կողմից ներկայացվում է եզրակացությունը, ներառյալ՝ ամփոփ ֆինանսական հաշվետվություններում ընդգրկված յուրաքանչյուր հաշվետվության անվանումը (հղում՝ պար. Ա13),

        (ii) սահմանում է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները,

        (iii) վկայակոչում է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, այդ եզրակացության ամսաթիվը, և, 17-18 պարագրաֆների համաձայն, այն փաստը, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն,

        (iv) եթե ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթիվն ավելի ուշ է քան աուդիտորական

---

[3] ԱՄՍ 560 <<Հետագա դեպքեր >> ստանդարտ:

[4] Պարագրաֆներ 17-18, վերաբերում են այն պայմաններին, երբ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական զեկույցը ձևափոխվել է, նշված պարագրաֆներով պահանջվում են լրացուցիչ տարրեր՝ ի լրումն սույն պարագրաֆում նշված տարրերի:

ստուգում անցած ֆինանսական հաշվետվություն-ների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթիվը, սահմանում է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություն-ները չեն արտացոլում աուդիտորական ստուգում անցած ֆինանսկան հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթվին հաջորդող դեպքերի ազդեցությունները, և

(v) հրապարակում՝ նշելով, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում կիրառված ֆինանսական հաշվետվության հիմունքով պահանջվող բոլոր բացահայտումները և, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չպետք է փոխարինի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը,

(դ) ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության[5] պատասխանատվության նկարագրությունը՝ բացատրելով, որ ղեկավարությունը[6] պատասխանատու է կիրառված չափանիշների համաձայն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար,

(ե) հրապարակում, որ աուդիտորը պատասխանատու է արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմնվելով սույն ստանդարտով պահանջվող ընթացակարգերի վրա,

(զ) պարագրաֆ՝ հստակորեն ներկայացնելով եզրակացությունը (տես՝ պարագրաֆներ 9-11),

(է) աուդիտորի ստորագրությունը,

(ը) աուդիտորական եզրակացության ամսաթիվը (հղում՝ պար. Ա14),

(թ) աուդիտորի հասցեն:

15. Եթե ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հասցեատերը չի հանդիսանում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նույն հասցեատերը, ապա աուդիտորը պետք է գնահատի մեկ այլ հասցեատեր կիրառելու տեղին լինելը (հղում՝ պար. Ա12):

16. Աուդիտորը պետք է հրապարակի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը ոչ ուշ քան (հղում՝ պար. Ա14).

(ա) այն ամսաթիվը, որի դրությամբ աուդիտորը ձեռք է բերել բավականաչափ ու հաապատասխան ապացույց, որը հիմք է հանդիսանում եզրակացություն արտահայտելու համար, ներառյալ այն, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են, իսկ համապատասխան իրավասություն ունեցողները հավաստիացրել են դրանց նկատմամբ իրենց պատասխանատվությունը, և

(բ) աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ամսաթիվը:

---

[5] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

[6] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

Եզրակացության ձևափոխումները, <<Հանգամանքները լուսաբանող>> պարագրաֆը կամ <<Այլ խնդիրներ>> պարագրաֆը աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունում (հղում՝ պար. Ա15).

17. Երբ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պարունակում է վերապահումով եզրակացություն, <<Հանգամանքները լուսաբանող>> պարագրաֆ կամ <<Այլ խնդիրներ>> պարագրաֆ, սակայն աուդիտորը բավարարված է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին կամ հանդիսանում են դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումը՝ կիրառված չափանիշների համաձայն, ապա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը՝ ի լրումն պարագրաֆ 14-ում թվարկված տարրերի, պետք է.
    (ա) սահմանի, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պարունակում է վերապահումով եզրակացություն, <<Հանգամանքները լուսաբանող>> պարագրաֆ կամ <<Այլ խնդիրներ>> պարագրաֆ, և
    (բ) նկարագրի՝
        (i) աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունում դրանց վերաբերյալ վերապահումով եզրակացություն արտահայտելու կամ ներկայացված <<Հանգամանքները լուսաբանող>> պարագրաֆի կամ <<Այլ խնդիրներ>> պարագրաֆի հիմքը, և
        (ii) դրանց ազդեցությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վրա, եթե առկա է:

18. Երբ աուդիտորական ստուգում անացած ֆինանսական հաշվետվութունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պարունակում է բացասական եզրակացություն կամ եզրակացությունից հրաժարում, ապա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը՝ ի լրումն պարագրաֆ 14-ում թվարկված տարրերի, պետք է՝
    (ա) սահմանի, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պարունակում է բացասական եզրակացություն կամ եզրակացությունից հրաժարում,
    (բ) նկարագրի նշված բացասական եզրակացության կամ եզրակացությունից հրաժարման հիմքը, և
    (գ) սահմանի, որ բացասական եզրակացության կամ եզրակացությունից հրաժարման արդյունքում, ամփոփ ֆինանսական ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելը տեղին չէ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ձևափոխված եզրակացություն

19. Եթե ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով չեն համապատասխանում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին կամ չեն հանդիսանում դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումը՝ կիրառված չափանիշների համաձայն, իսկ ղեկավարությունը չի համաձայնում

կատարել անհրաժեշտ փոփոխություններ, ապա աուդիտորը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ պետք է արտահայտի բացասական եզրակացություն (հղում՝ պար. Ա15):

Բաշխման կամ օգտագործման սահմանափակում, կամ ծանուցում ընթերցողներին հաշվապահական հաշվառման հիմունքի մասին

20. Երբ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության բաշխումը կամ օգտագործումը սահմանափակ է, կամ այդ հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը ընթերցողներին ծանուցում է, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են հատուկ հիմունքի համաձայն, ապա աուդիտորը պետք է ներառի նման սահմանափակում ամփոփ ֆինանսական հաշվետվություններում կամ այդ հաշվետվությունների վերաբերյալ աուդիտարական եզրակացությունում ծանուցի ընթերցողներին այդ մասին:

Համեմատություններ

21. Եթե աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պարունակում են համեմատություններ, իսկ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ոչ, ապա աուդիտորը պետք է որոշի, թե արդյոք նման բացթողումը խելամիտ է առաջադրանքի պայմաններում: Աուդիտորը պետք է որոշի ոչ խելամիտ բացթողման ազդեցությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության վրա (հղում՝ պար. Ա16):

22. Եթե ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պարունակում են համեմատություններ, որոնք զեկուցվել են մեկ այլ աուդիտորի կողմից, ապա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը նաև պետք է ներառի այն խնդիրները, որոնք ԱՄՍ 710-ն աուդիտորից պահանջում է ներառել աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունում[7] (հղում՝ պար. Ա17):

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ ներկայացված աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվություն

23. Աուդիտորը պետք է գնահատի՝ արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ ներկայացված աուդիտորական ստուգում չանցած որևէ լրացուցիչ տեղեկատվություն հստակ տարբերակված է ամփոփ ֆինանսական հաշվետվություններից, թե ոչ: Եթե աուդիտորը եզրակացնում է, որ կազմակերպության կողմից աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվության ներկայացումը հստակ չի տարբերակված ամփոփ ֆինանսական հաշվետվություններից, ապա աուդիտորը պետք է խնդրի ղեկավարությանը փոխել աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվության ներկայացումը: Եթե ղեկավարությունը մերժում է աուդիտորի խնդրանքը, ապա աուդիտորը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերա-

[7] ԱՄՍ 710 <<Համադրելի տեղեկատվություն – համապատասխան թվային տվյալներ և համադրելի ֆինանսական հաշվետվություններ>> ստանդարտ:

բերյալ աուդիտորական եզրակացությունում պետք է բացատրի, որ աուդիտորական եզրակացությունը չի անդրադառնում նշված տեղեկատվությանը (հղում՝ պար. Ա18):

Այլ տեղեկատվություն ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթերում

24. Աուդիտորը պետք է ընթերցի ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթում ներառված այլ տեղեկատվությունը և առնչվող աուդիտորական եզրակացությունը՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ էական անհամապատասխանությունները, եթե այդպիսիք կան, հատկորոշելու նպատակով: Եթե այլ տեղեկատվությունն ընթերցելիս աուդիտորը հատկորոշում է էական անհամապատասխանություն, ապա աուդիտորը պետք է որոշի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների կամ այլ տեղեկատվության վերանայման անհրաժեշտությունը: Եթե այլ տեղեկատվությունն ընթերցելիս աուդիտորը իրազեկ է դառնում փաստի ակնհայտ և էական խեղաթյուրմանը, ապա աուդիտորը այդ հարցը պետք է քննարկի ղեկավարության հետ (հղում՝ պար. Ա19):

Աուդիտորի կապակցում

25. Եթե աուդիտորը իրազեկ է դառնում, որ կազմակերպությունը ծրագրում է ամրագրել, որ աուդիտորը ներկայացրել է աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, սակայն չի ծրագրում ներառել առնչվող աուդիտորական եզրակացությունը, աուդիտորը ղեկավարությունից պետք է պահանջի ներառել աուդիտորական եզրակացությունը փաստաթղթում: Եթե ղեկավարությունը մերժում է աուդիտորի պահանջը, ապա աուդիտորը պետք է որոշի և իրականացնի համապատասխան այլ միջոցառումներ, որոնք նախագծված են կանխելու ղեկավարությանը անտեղի աուդիտորին այդ փաստաթղթի ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կապակցելու համար (հղում՝ պար. Ա20):

26. Աուդիտորը կարող է ներգրավված լինել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու գործընթացում, սակայն ներգրավված չլինել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու գործընթացում: Եթե աուդիտորը տեղեկանում է, որ կազմակերպությունը ծրագրում է փաստաթղթում հայտարարություն ներառել՝ վկայակոչելու աուդիտորին և նշելու, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները քաղված են աուդիտորի կողմից ստուգված ֆինանսական հաշվետվություններից, ապա աուդիտորը պետք է ընդունի վերը նշված վկայակոչումը/հիշատակումը, եթե՝
(ա) այն կատարված է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության համատեքստում, և
(բ) կազմակերպության կողմից արված հայտարարությունը տպավորություն չի ստեղծում, որ աուդիտորը եզրակացությունը ներկայացրել է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Եթե վերը նշված <<ա>> և <<բ>> կետերը չեն բավարարվում, ապա աուդիտորը ղեկավարությունից պետք է պահանջի փոխել հայտարարությունը այդ կետերին

բավարարելու համար կամ չվկայակոչել աուդիտորին վերը նշված փաստաթղթում: Որպես այլընտրանք, կազմակերպությունը կարող է աուդիտորին առաջադրել ներկայացնել աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ և ներառել առնչվող աուդիտորական եզրակացությունը փաստաթղթում: Եթե ղեկավարությունը չի փոխում հայտարարությունը, ինչպես նաև հրաժարվում է հանել աուդիտորին կատարված հղումը կամ ներառել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթում, ապա աուդիտորը պետք է տեղեկացնի ղեկավարությանը վկայակոչման վերաբերյալ իր անհամաձայնության մասին՝ որոշելով և իրականացնելով այլ համապատասխան միջոցառումներ, որոնք նախագծված են կանխելու ղեկավարությանը անտեղի աուդիտորին վկայակոչելու համար (հղում՝ Ա20):

***

Կիրառումը և այլ բացատրական նյութեր

Առաջադրանքի ստանձնում (հղում՝ պար. 5-6)

Ա1. Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնցից քաղվում են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ վերջինիս, համաձայն սույն ստանդարտի, ազատելու ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված պատասխանատվությունից: Սույն ստանդարտի կիրառումը չի տրամադրում բավականաչափ ու համապատասխան ապացույց, որի վրա կարող է հիմնվել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունը, եթե աուդիտորը աուդիտորական ստուգման չի ենթարկել նաև այն ֆինանսական հաշվետվությունները, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները:

Ա2. Ղեկավարության համաձայնությունը պարագրաֆ 6-ում նկարագրված խնդիրների շուրջ կարող է վկայել վերջինիս կողմից առաջադրանքի պայմանների գրավոր ընդունումը:

Չափանիշներ (հղում՝ պարագրաֆ 6ա))

Ա3. Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ենթադրում է ղեկավարության կողմից այն տեղեկատվության որոշումը, որն անհրաժեշտ է արտացոլել ամփոփ ֆինանսական հաշվետվություններում, այնպես որ դրանք բոլոր էական առումներով համապատասխանեն աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին կամ նեկայացնեն դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումը: Հաշվի առնելով, որ ամփոփ ֆինանսական հաշվետվություններն իրենց բնույթով պարունակում են համակցված տեղեկատվություն և սահմանափակ բացահայտում, ավելանում է ռիսկը, որ դրանք չեն պարունակի անհարժեշտ տեղեկատվություն՝ կոնկրետ պայմաններում ապակողմնորոշիչ չլինելու համար: Ռիսկն ավելանում է, երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար սահմանված չափանիշներ առկա չեն:

Ա4. Ստորև նշված են այն գործոնները, որոնք կարող են ազդել կիրառված չափանիշների ընդունելի լինելու աուդիտորի որոշման վրա՝

- կազմակերպության բնույթը,
- ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նպատակը,
- ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողների տեղեկատվական կարիքները, և
- արդյոք կիրառված չափանիշները հանգեցնում են այնպիսի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների, որոնք պայմաններում ապակողմնորոշիչ չեն:

Ա5. Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման չափանիշները կարող են սահմանվել ստանդարտներ մշակող իրավասու կամ ճանաչված կազմակեպության կողմից կամ էլ օրենսդրությամբ կամ կարգավորող նորմերով: Ինչպես ԱՄՍ 210-[8] ում բացատրված ֆինանսական հաշվետվությունների դեպքում, նման այլ բազմաթիվ դեպքերում աուդիտորը կարող է ենթադրել, որ նման չափանիշներն ընդունելի են:

Ա6. Երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար սահմանված չափանիշներ առկա չեն, չափանիշները կարող են մշակվել ղեկավարությանկողմից, օրինակ՝ հիմնվելով կոնկրետ ճյուղում առկա փորձի վրա: Չափանիշները, որոնք ընդունելի են պայմաններում կհանգեցնեն այնպիսի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների, որոնք՝

(ա) պատշաճ ձևով բացահայտում են իրենց ամփոփ բնույթը և հատկորոշում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները,

(բ) ումից և որտեղից կարելի է ձեռք բերել աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, կամ, եթե օրենսդրությամբ կամ կարգավորող նորմերով նախատեսված է, որ աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները չպետք է հասանելի լինեն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին և դրանցով սահմանվում են ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման այդ օրենսդրության կամ կարգովորող նորմերի չափանիշները,

(գ) պատշաճ ձևով բացահայտում են կիրառված չափանիշները,

(դ) համապատասխանում են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններում ներկայացված առնչվող տեղեկատվությանը կամ կարող են ենթադրվել այդ տեղեկատվությունից, և

(ե) ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նպատակի շրջանակներում, պարունակում են անհրաժեշտ տեղեկատվություն և պաշաճ ձևով կիրառում են համակցության սկզբունքը՝ կոնկրետ պայմաններում ապակողմնորոշիչ տեղեկատվություն չներկայացնելու համար:

Ա7. Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ամփոփ բնույթի պատշաճ բացահայտումը և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների հատկորոշումը, ինչպես շված է պարագրաֆ Ա6 (ա) կետում, կարող է, օրինակ ներկայացվել համապատասխան վերնագրի կիրառմամբ, օրինակ՝ <<20Χ1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած

[8] ԱՄՍ 210 <<Աուդիտի առաջադրանքի պայմանների համաձայնեցումը>> ստանդարտը, պարագրաֆներ Ա3 և Ա8-Ա9:

ֆինանսական հաշվետվություններից պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվություններ>>:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների հասանելիության գնահատում (հղում՝ պար. 8(է))

Ա8. Աուդիտորի գնահատականը՝ արդյոք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները հասանելի են ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողներին առանց անհարկի դժվարության կրում է ստորև նշված գործոնների ազդեցությունը, ինչպես օրինակ արդյոք՝

- ամփոփ ֆինանսական հաշետվությունները հստակ նկարագրում են ումից կամ որտեղից կարելի է ձեռք բերել աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները,
- աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հանրությանը, կամ
- ղեկավարությունը սահմանել է գործընթաց, համաձայն որի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողները կարող են ազատ ձեռք բերել աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները:

Եզրակացության ձև (հղում՝ պար. 9)

Ա9. Հիմք ընդունելով պարագրաֆ 8-ում նկարագրված ընթացակարգերի իրականացման արդյունքում ձեռք բերված ապացույցի գնահատականը, այն կարծիքը, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ չձևափոխված եզրակացությունը տեղին է, հնարավորություն է տալիս աուդիտորին արտահայտել եզրակացություն ներառելով պարագրաֆ 9-ում նշված արտահայտություններից որևէ մեկը: Աուդիտորի որոշումը, թե արտահայտություններից որ մեկին պետք է նախապատվությունը տալ կախված է կոնկրետ իրավահամակարգում ընդհանուր ընդունված փորձից:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբեյալ աուդիտորական եզրակացությանն հաջորդող աշխատանքների և դեպքերի ժամկետ (հղում՝ պար. 12)

Ա10. Պարագրաֆ 8-ում նկարագրված ընթացակարգերը հաճախ իրականացվում են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում կամ անմիջապես դրանից հետո: Երբ աուդիտորն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ավարտից հետո, ապա աուդիտորից չի պահանջվում է ձեռք բերել լրացուցիչ աուդիտորական ապացույց աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կամ զեկուցել այն դեպքերի հետևանքների մասին, որոնք տեղի են ունեցել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթվից հետո՝ հաշվի առնելով, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները քաղված են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից և չեն թարմացվում:

Աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Աուդիտորական եզրակացության տարրերը

Անվանում (հղում՝ պար. (14(ա))

Ա11. Անվանում՝ հատկորոշելով, որ եզրակացությունը ներկայացվում է անկախ աուդիտորի կողմից, օրինակ՝ <<Անկախ աուդիտորի եզրակացություն>> անվանումը հաստատում է, որ աուդիտորը բավարարել է ակախությանը վերաբերող վարքագծի բոլոր համապատասխան պահանջները, համաձայն որի անկախ աուդիտորի եզրակացությունը տարբերակվում է այլ կողմերի կողմից թողարված եզրակացություններից:

Հասցեատեր (հղում՝ պար. 14(բ), 15)

Ա12. Գործոնները, որոնք հաշվի է առնում աուդիտորը գնահատելու ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հասցեատիրոջ համապատասխան լինելը ներառում են առաջադրանքի պայմանները, կազմակերպության բնույթը և ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նպատակը:

Ներածական պարագրաֆ (հղում՝ պար. 14(գ)(i))

Ա13. Երբ աուդիտորը տեղյակ է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառվելու են այլ տեղեկատվություն պարունակող փաստաթղթում, ապա աուդիտորը կարող է դիտարկել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր էջի վրա նշել էջերի թիվը, եթե ներկայացման ձևը թույլ է տալիս այդպես վարվել: Նշված մոտեցումը օգնում է ընթերցողներին հատկորոշել (իդենտիֆիկացնել), ճանաչել ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնց վերաբերում է աուդիտորկան եզրակացությունը:

Աուդիտորական եզրակացության ամսաթիվը (հղում՝ պար. 14(ը),16)

Ա14. Որպեսզի համապատասխան իրավասություն ունեցող անձը կամ անձինք եզրակացնեն, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են և ստանձնեն դրանց նկատմամբ իրենց պատասխանատվությունը, կախված է առաջադրանքի պայմաններից, կազմակերպության բնույթից և ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նպատակից:

Ցուցադրական օրինակներ (հղում՝ պար. 14, 17-18,19)

Ա15. Սույն ստանդարտին կից հավելվածը պարունակում է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունների ցուցադրական օրինակներ, որոնք՝

(ա) պարունակում են չձևափոխված եզրակացություններ,

(բ) քաղված են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից, որոնց վերաբերյալ աուդիտորն արտահայտել է ձևափոխված եզրակացություններ, և

(գ) պարունակում են ձևափոխված եզրակացություն:

Համեմատություններ (հղում՝ պար. 21-22)

Ա16. Եթե աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշետվությունները պարունակում են համեմատություններ, ենթադրվում է, որ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները նույնպես կարող են ունենալ համեմատություններ: Համեմատությունները աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններում կարող են դիտվել որպես համապատասխան թվեր կամ համեմատական ֆինանսական տեղեկատվություն: ԱՄՍ 710-ում նկարագրվում է, թե ինչպես է այդ տարբերությունն ազդում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության վրա, ներառյալ, մասնավորապես՝ այլ աուդիտորների առկայության դեպքում, որոնք ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկել նախորդ ժամանակաշրջանում:

Ա17. Հանգամանքները, որոնք կարող են ազդել աուդիտորին որոշելու՝ արդյոք համեմատությունների բացթողումը խելամիտ է, թե ոչ, ներառում են ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բնույթը և նպատակը, կիրառված չափանիշները, ինչպես նաև ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողների տեղեկատվական կարիքները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների հետ ներկայացված աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվություն (հղում՝ պար.23)

Ա18. ԱՄՍ 700-[9] ը պարունակում է պահանջներ և ցուցումներ, որոնք պետք է կիրառվեն, երբ աուդիտորական ստուգում չանցած լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների հետ, որոնք ըստ անհրաժեշտության հարմարեցվելով պայմաններին, պարագրաֆ 23-ի պահանջը կիրառելիս կարող են լինել օգտակար:

Այլ տեղեկատվություն ամփոփ ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթերում (հղում՝ պար. 24)

Ա19. ԱՄՍ 720-ը[10] պարունակում է պահանջներ և ցուցումներ, որոնք վերաբերում են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթում ներառված այլ տեղեկատվության և առնչվող աուդիտորական եզրակացության ընթերցմանը, ինչպես նաև փաստերի էական անհամապատասխանություններին և էական շեղումներին արձագանքելուն: Պայմաններում ըստ անհրաժեշտության հարմարեցվելով՝ դրանք պարագրաֆ 24-ի պահանջը կիրառելիս կարող են լինել օգտակար:

Աուդիտորի կապակցում (հղում՝ պար. 25-26)

Ա20. Այլ համապատասխան միջոցառումները, որոնք կարող են իրականացվել աուդիտորի կողմից, երբ ղեկավարությունը հրաժարվում է կատարել աուդիտորի պահանջը, ներառում են նախատեսվող օգտագործողներին, հայտնի այլ երրորդ կողմի օգտագործողներին աուդիտորին անտեղի հիշատակելու մասին տեղեկացնելը:

---

[9] ԱՄՍ 700 <<Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում>> ստանդարտ, պարագրաֆներ 46-47:

[10] ԱՄՍ 720 <<Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության հետ կապված աուդիտորի պատասխանատվությունը>> ստանդարտ:

Աուդիտորի կողմից համապատասխան գործողությունների իրականացումը պայմանավորված է աուդիտորին օրենքով վերապահված իրավունքերից և պարտականություններից: Հետևաբար, աուդիտորը կարող է անհրաժեշտ համարել հայցել իրավական օգնություն:

Հավելված

(հղում՝ պար. Ա15)

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունների ցուցադրական օրինակներ

- Ցուցադրական օրինակ 1. Աուդիտորական եզրակացություն՝ սահմանված չափանիշների համաձայն պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթիվն ավելի ուշ է քան այն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորկան եզրակացության հրապարակման ամսաթիվը, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները:

- Ցուցադրական օրինակ 2. Աուդիտորական եզրակացություն՝ ղեկավարության կողմից մշակված չափանիշների համաձայն պատրաստված և պատշաճ ձևով ամփոփ ֆինանսական հաշվետվություններում բացահայտված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորի որոշման համաձայն՝ կիրառված չափանիշներն ընդունելի են տվյալ պայմաններում: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն:

- Ցուցադրական օրինակ 3. Աուդիտորական եզրակացություն՝ ղեկավարության կողմից մշակված չափանիշների համաձայն պատրաստված և պատշաճ ձևով ամփոփ ֆինանսական հաշվետվություններում բացահայտված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորի որոշման համաձայն՝ կիրառված չափանիշներն ընդունելի են տվյալ պայմաններում: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է վերապահումով եզրակացություն:

- Ցուցադրական օրինակ 4. Աուդիտորական եզրակացություն՝ ղեկավարության կողմից մշակված չափանիշների համաձայն պատրաստված և պատշաճ ձևով ամփոփ ֆինանսական հաշվետվություններում բացահայտված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորի որոշման համաձայն՝ կիրառված չափանիշներն ընդունելի են տվյալ պայմաններում: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է բացասական եզրակացություն:

- Ցուցադրական օրինակ 5. Աուդիտորական եզրակացություն՝ սահմանված չափանիշների համաձայն պատրաստված ամփոփ ֆիաննսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն:

Աուդիտորի որոշման համաձայն՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ չձևափոխված եզրակացություն արտահայտելը հնարավոր չէ:

<u>Ցուցադրական օրինակ 1.</u>
Պայմանները ներառում են հետևյալը՝

- **աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն,**
- **ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առկա են սահմանված չափանիշներ,**
- **ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսթիվն ավելի ուշ է քան այն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթիվը, որոնցից քաղված են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները:**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[Համապատասխան հասցեատերը]

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են ԱԲԳ ընկերության ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունները՝ քաղված ԱԲԳ ընկերության 20X1թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 20X2 թվականի փետրվարի 15-ի մեր եզրակացությունում արտահայտել են չձևափոխված աուդիտորական եզրակացություն: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությանն հաջորդող ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի հետևանքները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են [նկարագրել ֆիանսական հաշվետվության հիմունքը, որը կիրառվել է ԱԲԳ ընկերության աուդիտորկան ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս]: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը (ընկալումը) չի փոխարինում ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆիանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության[11] պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար՝ [նկարագրել սահմանված չափանիշները] համաձայն:

[11] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 <<Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ>> ստանդարտին համապատասխան:

Եզրակացություն

Մեր կածիքով 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին (կամ դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումն են)՝ [նկարագրեք սահմանված չափանիշները] համաձայն:

[Աուդիտորի ստորագրությունը]
[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]
[Աուդիտորի հասցեն]

<u>Ցուցադրական օրինակ 2.</u>
Պայմանները ներառում են հետևյալը՝

- **աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն,**
- **չափանիշները մշակված են ղեկավարության կողմից և պատշաճ ձևով բացահայտված են X ծանոթագրությունում: Աուդիտորի որոշման համաձայն, չափանիշներն ընդունելի են տվյալ պայմաններում:**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[Համապատասխան հասցեատերը]

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են ԱԲԳ ընկերության ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունները՝ քաղված ԱԲԳ ընկերության 20X1թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 20X2 թվականի փետրվարի 15-ի մեր եզրակացությունում արտահայտել են չձևափոխված աուդիտորական եզրակացություն[12]:

[12] Երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթիվն ավելի ուշ է քան աուդիտորական ստուգում անցած այն ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, հետևյալ նախադասությունն ավելանում է սույն պարագրաֆին. <<Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են [նկարագրել ֆիանսական հաշվետվության հիմունքը, որը կիրառվել է ԱԲԳ ընկերության աուդիտորկան ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս]: հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆիանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության[13] պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար՝ X ծանոթագրությունում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 <<Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ>> ստանդարտին համապատասխան:

Եզրակացություն

Մեր կածիքով 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին X ծանոթագրությունում նկարագրված հիմունքի համաձայն:

[Աուդիտորի ստորագրությունը]
[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]
[Աուդիտորի հասցեն]

<u>Ցուցադրական օրինակ 3.</u>
Պայմանները ներառում են հետևյալը՝

- **աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է վերապահումով եզրակացություն,**
- **չափանիշները մշակված են ղեկավարության կողմից և պատշաճ ձևով բացահայտված են X ծանոթագրությունում: Աուդիտորի որոշման համաձայն, չափանիշներն ընդունելի են տվյալ պայմաններում:**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

արտացոլում նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր զեկույցին հաջորդող ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի հետևանքները>>:

[13] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

[Համապատասխան հասցեատերը]

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են ԱԲԳ ընկերության ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունները՝ քաղված ԱԲԳ ընկերության 20X1թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվե-տվություններից:[14] Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 20X2 թվականի փետրվարի 15-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք վերապահումով աուդիտորական եզրակացություն (տես՝ ստորև): Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են [նկարագրել ֆիանսական հաշվետվության հիմունքը, որը կիրառվել է ԱԲԳ ընկերության աուդիտորկան ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս]: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆիանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության[15] պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար՝ X ծանոթագրությունում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 <<Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ>> ստանդարտին համապատասխան:

Եզրակացություն

Մեր կածիքով 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին (կամ դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումն են)՝ X ծանոթագրությունում նկարագրված հիմունքի համաձայն: Այնուհանդերձ, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պարունակում են սխալներ այնքանով, որքանով, որ

[14] Երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթիվն ավելի ուշ է քան աուդիտորական ստուգում անցած այն ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, հետևյալ նախադասությունն ավելանում է սույն պարագրաֆին. <<Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր զեկույցին հաջորդող ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի հետևանքները>>:

[15] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

դրանք նկատվում են 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած սխալները նկարագրված է 20X2 թվականի փետրվարի 15-ի մեր եզրակացության վերապահումով եզրակացության մեջ: Վերապահումով եզրակացության պատճառն այն է, որ ընկերության պաշարներն այդ ֆինանսական հաշվետվությունների հաշվապահական հաշվեկշռում հաշվառված են xxx գումարով: Ղեկավարությունը պաշարները չի սահմանել ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով, այլ դրանք սահմանել է միայն ինքնարժեքով, որը հակասում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին: Ընկերության գրանցումները ցույց են տալիս, որ, եթե ղեկավարությունը պաշարները սահմաներ ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով, xxx գումարի չափով կպահանջվեր պաշարների արժեքի իջեցում մինչև դրանց իրացման զուտ արժեքը: Հետևաբար, վաճառքի (իրացման) արժեքը կբարձրանար xxx գումարով, իսկ շահութահարկը, զուտ եկամուտը և բաժնետերերի սեփական կապիտալը կնվազեր xxx, xxx և xxx գումարով, համապատասխանաբար: Մեր որակավորված աուդիտորական եզրակացությունը, սահմանում է, որ նկարագրված խնդրի հետևանքներից բացի, այդ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում (*տալիս են իրական և ճշմարիտ պատկեր)* 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԲԳ ընկերության ֆինանսական վիճակը և դրա ֆինանսական արդյունքների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն այդ տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

[Աուդիտորի ստորագրությունը]

[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]

[Աուդիտորի հասցեն]

<u>Ցուցադրական օրինակ 4.</u>
Պայմանները ներառում են հետևյալը՝

- **աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է բացասական եզրակացություն,**
- **չափանիշները մշակված են ղեկավարության կողմից և պատշաճ ձևով բացահայտված են X ծանոթագրությունում: Աուդիտորի որոշման համաձայն, չափանիշներն ընդունելի են տվյալ պայմաններում:**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[Համապատասխան հասցեատերը]

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են ԱԲԳ ընկերության ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունները՝ քաղված ԱԲԳ ընկերության 20X1թվականի դեկտեմբերի 31-ի

դրությամբ ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից[16]:
Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են [նկարագրել ֆիանսական հաշվետվության հիմունքը, որը կիրառվել է ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս]: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆիանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության[17] պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար՝ X ծանոթագրությունում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 <<Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ>> ստանդարտին համապատասխան:

Եզրակացությունից հրաժարում

20X2 թվականի փետրվարի 15-ի մեր եզրակացությունում, ԱԲԳ ընկերության 20X1 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մենք արտահայտել են բացասական աուդիտորական եզրակացություն: Բացասական եզրակացություն արտահայտելու համար հիմք է ծառայել [նկարագրել բացասական աուդիտորական եզրակացության հիմքը]: Մեր կողմից արտահայտած բացասական աուդիտորական եզրակացությունը սահմանում է, որ [նկարագրել բացասական աուդիտորական եզրակացությունը]:
Հիմք ընդունելով վերը նշված խնդրի կարևորությունը, տեղին չէ արտահայտել եզրակացություն ԱԲԳ ընկերության 20X1 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

[Աուդիտորի ստորագրությունը]
[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]
[Աուդիտորի հասցեն]

---

[16] Երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթիվն ավելի ուշ է քան աուդիտորական ստուգում անցած այն ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, հետևյալ նախադասությունն ավելանում է սույն պարագրաֆին. <<Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր զեկույցին հաջորդող ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի հետևանքները>>:

[17] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

<u>Ցուցադրական օրինակ 5.</u>
Պայմանները ներառում են հետևյալը՝

- **աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտված է չձևափոխված եզրակացություն,**
- **ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առկա են սահմանված չափանիշներ,**
- **աուդիտորի որոշման համաձայն, հնարավոր չէ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտել չձևափոխված եզրակացություն:**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[Համապատասխան հասցեատերը]

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են ԱԲԳ ընկերության ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունները՝ քաղված ԱԲԳ ընկերության 20X1թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 20X2 թվականի փետրվարի 15-ի մեր եզրակացությունում արտահայտել են չձևափոխված աուդիտորական եզրակացություն[18]:
Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են [նկարագրել ֆիանսական հաշվետվության հիմունքը, որը կիրառվել է ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս]: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում ԱԲԳ ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:
Ամփոփ, աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության[19] պատասխանատվությունը
Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար՝ [նկարագրել սահմանված չափանիշները] համաձայն:
Աուդիտորի պատասխանատվությունը
Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 <<Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ>> ստանդարտին համապատասխան:

---

[18] Երբ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության հրապարակման ամսաթիվն ավելի ուշ է քան աուդիտորական ստուգում անցած այն ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը, որոնցից քաղվել են ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, հետևյալ նախադասությունն ավելանում է սույն պարագրաֆին. <<Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր զեկույցին հաջորդող ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի հետևանքները>>:
[19] Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

Բացասական եզրակացության հիմքը
[Նկարագրել այն խնդիրը, որի արդյունքում ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով չեն համապատասխանում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին (կամ չեն համարվում դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումը)՝ սահմանված չափանիշների համաձայն:]

Բացասական եզրակացություն
Մեր կածիքով, հիմք ընդունելով <<Բացասական եզրակացության հիմք>> պարագրաֆում քննարկված խնդրի կարևորությունը, վերը հիշատակված ամփոփ ֆինանսական հաշվե-տվությունները, բոլոր էական առումներով, չեն համապատասխանում ԱԲԳ ընկերության 20X1 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին (կամ չեն համարվում դրանց ճշմարիտ ամփոփ ներկայացումը)՝ [նկարագրել սահմանված չափանիշները] համաձայն:

[Աուդիտորի ստորագրությունը]
[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]
[Աուդիտորի հասցեն]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ